12 փետրվարի 2015 թվականի N 196 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 13-Ի N 305-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 13-ի «Հայաստանի Հանրապետության տրանսպորտային անվտանգության ապահովման ազգային ռազմավարության դրույթների իրականացումն ապահովող 2014-2017 թվականների միջոցառումների ծրագիր-ժամանակացույցը հաստատելու մասին» N 305-Ն որոշման հավելվածի 9-17-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«	9.	Հայաստանի հարավային երկաթուղու շինարարություն	«ՌԱՍԻԱ» ՖՔԷ-ից ծրագծի կոորդինատային չափագրման տվյալների ստացում և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին տրամադրում	2015 թ. 2-րդ եռամսյակ	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն «ՌԱՍԻԱ» ՖՔԷ (համաձայնությամբ) «Երկաթուղու շինարարության տնօրինություն» փակ բաժնետիրական ընկերություն (համաձայնությամբ) ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե

10.		ծրագծի օտարման շերտում գտնվող հողատարածքների և նրանց վրա գտնվող շինությունների գույքագրում ու շինարարության համար անհրաժեշտ հողատարածքների նկատմամբ իրավունքների ձևակերպումներ (ձեռքբերում, օտարում, հատկացում և այլն)	2015 թ. 3-րդ եռամսյակ 2016 թ. 1-ին եռամսյակ	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն ՀՀ համապատասխան մարզպետարաններ, համայնքի ղեկավարներ (համաձայնությամբ) ՀՀ բնապահպանության նախարարություն «Երկաթուղու շինարարության տնօրինություն» փակ բաժնետիրական ընկերություն (համաձայնությամբ) Այլ շահագրգիռ մարմիններ
11.		կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկման կազմակերպում	2015-2016 թթ.	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն ՀՀ համապատասխան մարզպետարաններ, համայնքի ղեկավարներ (համաձայնությամբ) «Երկաթուղու շինարարության տնօրինություն» փակ բաժնետիրական ընկերություն (համաձայնությամբ) Այլ շահագրգիռ մարմիններ
12.		նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմելը և ներկայացնելը	2015 թ. 3-րդ եռամսյակ	«ՌԱՍԻԱ» ՖՋԷ (համաձայնությամբ)
13.		նախագծանախահաշվային փաստաթղթերի հատուկ համալիր փորձաքննություն և փորձաքննության արդյունքների հաստատում	2016 թ. 1-ին եռամսյակ	Փորձաքննական հանձնաժողով՝ համաձայն ՀՀ կառավարության 2010 թ. մայիսի 6-ի N 711-Ն որոշման ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
14.		ծրագրի իրականացման համար ֆինանսական միջոցներ հայթայթելը և հաստատման ներկայացնելը	2015-2016 թթ.	«ՌԱՍԻԱ» ՖՋԷ (համաձայնությամբ)
15.		տեխնիկական վերահսկողություն իրականացնող կազմակերպության ընտրություն	2016 թ. 1-ին եռամսյակ	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն «ՌԱՍԻԱ» ՖՋԷ (համաձայնությամբ) «Երկաթուղու շինարարության տնօրինություն» ՓԲԸ (համաձայնությամբ)

16.		շինարարության թույլտվության ստացման համար փաստաթղթերի ձևակերպման իրականացում և շինարարական աշխատանքների կատարման ժամանակացույցի կազմում	2016 թ. 2-րդ եռամսյակ	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն «Երկաթուղու շինարարության տնօրինություն» ՓԲԸ (համաձայնությամբ)
17.		շինարարության սկիզբ, շինարարական աշխատանքների համակարգում և վերահսկում	2016 թ. 3-րդ եռամսյակ	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն «Երկաթուղու շինարարության տնօրինություն» ՓԲԸ (համաձայնությամբ) «ՌԱՍԻԱ» ՖՔԷ (համաձայնությամբ)

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ